ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
**ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY
**FOUNDATION**

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«21» 05 2026թ. № 03/12

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ

**ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի, նույն հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ և 19-րդ ենթակետերի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 9.3.-րդ և 9.4.-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակից «ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի համարը | չափաբաժնի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/23 | 1 | Գարու սերմեր | 2,000,000.00 | «ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 01091058 | ք.Երևան, ՆՈՐ ՆՈՐՔ, Մոլդովական 60 0062 | 08.05.2026թ. | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ | «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, 36-րդ հոդվածի 3-րդ մաս, Կարգի 32-րդ կետի 13-րդ և 19-րդ ենթակետեր, Ընթացակարգի հրավերի 9.3.-րդ և 9.4.-րդ կետեր | «ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 06.05.2026 թվականը ներառյալ, գրավոր չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, որի արդյունքում Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Մասնավորապես, նշված ընթացակարգի շրջանակներում պայմանագրի և որակավորման ապահովումները և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը հաշվառման Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում, մինչդեռ սահմանված ժամկետներում «ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն որևէ գրավոր փաստաթուղթ չի ներկայացրել Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին՝ դրսևորելով անգործություն և թույլ տալով գնման գործընթացով ստանձնած պարտավորությունների խախտում: |
| | 2 | Առվույտի սերմ | 1,800,000.00 | | | | | | | |
| | 3 | Կորնգանի սերմ | 1,000,000.00 | | | | | | | |

ՌԵԿՏՈՐ՝ Հ. ԶԱՔՈՅԱՆ